«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակության նշանակությունը

Առարկան՝ *Հայոց լեզու և գրականություն*

Հետազոտող ուսուցիչ՝ *Անուշ Վարդանյան*

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Ռոբերտ Աբաջյանի անվան հ.147 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 3

1. Ի՞նչ է առակը: Աստվածաշնչյան առակների դաստիարակության նշանակությունը 5

2. Աստվածաշնչյան առակները և կիրառման հաճախականությունը մայրենիի դասագրքերում 9

Եզրակացություն 15

Օգտագործված գրականության ցանկ 17

Ներածություն

Հետազոտության արդիականությունը:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է սովորողների կողմից մարդկային հարաբերությունների, բնության մեջ առկա լավ ու վատ երևույթների պատճառներն ընդհանրացնելու, գաղափարը ձևակերպելու կարողության կարևորությամբ և այդ կարողության ձևավորման հարցում առակի հնարավորություններով:

Աստվածաշնչյան առակը դաստիարակչական նպատակ ունեցող ստեղծագործություն է և օգնում է դպրոցականին իրական կյանքում ճիշտ կողմնորոշվելու և ավելի հեշտ ապրելու:

Աստվածաշնչյան առակի ուսումնասիրման հարցը արդիական է, քանի որ մարդ արարածը կյանքի օրենքները սիրում է սովորել օրինակով, իսկ առակը տալիս է այդ հնարավորությունները. մարդու համար ընդօրինակելն ավելի հեշտ է, քան վերացական խրատը, ուստի հերոսների արարքներով բացահայտվում է ստեղծագործության գաղափարը, որն էլ նպաստում է աշակերտների՝ արդար, ազնիվ, ճշմարտախոս, աշխատասեր, քաջ, անվախ ու հայրենասեր մարդ դաստիարակվելուն:

Հետազոտության նպատակն է՝ աստվածաշնչյան առակների միջոցով երեխաների մեջ դաստիարակել բարոյական բարձր արժեքներ, որպեսզի կարողանան տարբերակել աշխարհի չարն ու բարին, կյանքում ուղղորդվեն դրական արժեքներով: Կարևոր է նաև, թե որքանով են նրանք ընկալում առակի ասելիքը, և որքանով են դրանք համար - վում արդիական: Ինչպես նաև փոխներգործուն մեթոդների և արտադասարա - նային միջոցառումների միջոցով վեր հանել առակի գաղափարի բացահայտման հնարավորությունները:

Հետազոտության խնդիրներն են՝ բացահայտել աստվածաշնչյան առակ - ների կիրառման հաճախականությունը տարրական դպրոցի մայրենիի դասագրք - երում, ինչպես նաև հիմնավորել աստվածաշնչյան առակի ուսուցումը որպես կրտսեր դպրոցականների կարդացած բնագրի գաղափարի բացահայտման և տրամաբանության զարացման միջոց:

Հետազոտության օբյեկտը՝ տարրական դասարաններում մայրենիի դաս - երին ընթերցված աստվածաշնչյան առակների գաղափարի ըմբռնման, յուրացման և կշռադատման մեթոդների համակարգն է:

Հետազոտության առարկան՝ մայրենիի դասերին աստվածաշնչյան առակի գաղափարի վերհանման մեթոդական գործընթացն է:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է՝ ներածական մասից, երկու բաժիններից, եզրակացության բաժնից և օգտագործված գրականության ցանկից:

1. Ի՞նչ է առակը: Աստվածաշնչյան առակների դաստիարակության նշանակությունը

Առակը (առ ակն՝ աչքի առաջ) խրատական բնույթի փոքրածավալ գեղարվեստական ստեղծագործություն է: Առաջացել է ժողովրդական բանահյուսու - թյան մեջ, հետո սկսել է մշակվել առակագիր գրողների կողմից: Առակներում հանդես են գալիս ինչպես մարդիկ, այնպես էլ կենդանիներ, բույսեր և այլն: Նրանց միջոցով ծաղրվում են մարդկային վատ սովորույթները, գովաբանվում առաքինությունները:
Այլաբանորեն գործածվելով՝ շատ կենդանիներ վերածվել են խորհրդանիշների, օրինակ առյուծը՝ քաջության, հզորության, աղվեսը՝ խորմանկության, էշը՝ հիմարության:
Առակի վերջում սովորաբար հեղինակը դրսևորում է իր հստակ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ առակի բարոյախոսությունն է:
Առակի հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, իրեր, լուսատուներ և այլն: Անտիկ շրջանում և միջնադարում առակները արձակ ժանրի ստեղծագործություններ էին, սակայն հետագայում դրանք սկսեցին գրվել չափածո:

Ամենահին առկագիրը եղել է հույն Եզոպոսը: Նշանավոր առակգիրներ են Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, Խնկո Ապերը, ֆրանսիացի Լաֆոնտենը, ռուս Իվան Կռիլովը: Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից: Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը: Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության հոռի և բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն: Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց:

Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը: Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն: Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա: Առակների առաջին հայտնի հեղինակը հույն Եզոպոսն է:

Առակներով հարուստ է նաև հին հնդկական գրականությունը:

Արևելյան ժողովուրդների մեջ տարածված են եղել Խիկար Իմաստունի և Մոլլա Նասրեդինի առակները։ Հայ գրականության մեջ առակագրությունն սկզբնավորվել է թարգմանությունների միջոցով. դրանք ամփոփվել են «Բարվախոս» («Բարոյախոս») և «Ոլիմպիանի (Ողոմպիանի) առակները» ժողովածուներում, որոնք հունարենից թարգմանվել են V–VI դարերում, այլ տվյալով՝ VII դարում։

XI–XIII դարերում ձևավորվել է հայ ինքնուրույն առակագրությունը։

Մեծ ժողովրդականություն են վայելել Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները։

Վարդան Այգեկցու անունով պահպանվել են առակների ժողովածուներ, որոնցից ամենահայտնին «Աղվեսագիրքն» է (նկարահանվել է մուլտֆիլմ, 1975թ., Հայֆիլմ)։ Ահա «Իմաստուն զինվորը» առակը «Աղվեսագրքից»։ Մի ոմն իմաստուն զինվոր պատերազմ էր գնում, և նա երկու ոտքով կաղ էր։ Եվ զինվորներից մեկը նրան ասաց. «Ով ողորմելի, ո՞ւր ես գնում։ Քեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարող»։ Եվ նա ասաց. «Ով անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, կռվելու և հաղթելու»։

Առակներն այժմ էլ պատմվում և պահպանվում են ժողովրդի մեջ։ Նշանավոր առակագիրներ են ֆրանսիացի Ժան դը Լաֆոնթենը և ռուս Իվան Կռիլովը։

Հայ գրականության մեջ առակներ են գրել նաև Խաչատուր Աբովյանը, Ղազարոս Աղայանը, Ավետիք Իսահակյանը, Խնկո Ապերը, Հովհաննես Շիրազը, Մկրտիչ Կորյունը և ուրիշներ։

Առակները լինում են մի քանի տեսակի՝

1. փիլիսոփայական,
2. հոգեբանափիլիսոփայական,
3. աստվածաշնչյան և այլն։

Աստվածաշնչում տեղ գտած առակներն ունեն իրենց ուրույն մեկնաբանությունը և դաստիարակչական նշանակություն։

Հին կտակարանում Սողոմոն իմաստունի առակներն են, որոնք զետեղված են <<Առակաց>> գրքում։ Նոր կտակարանում Հիսուսի առակներն են, որոնք ունեն դաստիարակչական նշանակություն։ Հիսուսի առակները գտնվում են Աստվածաշնչի կանոնական ավետարաններում։ Դրանք հիմնականում հանդիպում են Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի ավետարաններում, որտեղ այս առակներից շատերը կրկնվում են։

Մինչդեռ Հովհաննես ավետարանիչը միայն երկու առակ է պատմում՝ «Գազանի և բարի հովվի առակը» 10-րդ գլխում և «Ճշմարիտ որթատունկի առակը» 15-րդ գլխում։

Ավետարաններում ընդհանուր առմամբ կարելի է գտնել Հիսուսի 43 առակ։

Դասը հաճախակի համեմվելով աստվածաշնչյան առակներով, կդառնա ավելի հետաքրքիր, հագեցած ու տեսանելի, իսկ աշակերտները կդառնան բարձր արժեհամակարգի տեր մարդիկ, կուղղորդվեն բարոյական սկզբունքներով և արժեքներով։ Առակները մեծ ճանաչողական արժեք ունեն։ Նրանք ժամանակին հոգևոր սնունդ են տվել ընթերցողին և ունկնդրին։ Դրանք կարևոր աղբյուր են ժամանակի կյանքի բազմաթիվ այնպիսի կողմերի լուսաբանման համար, որոնց մասին լռում են մատենագրական մյուս հուշարձանները[1]։

Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում անչափ կարևոր են՝

- մարդասիրության,
- հայրենասիրության,
- ազնվության,
- արդարամտության,
- քրիստոնեական հավատի վերաբերյալ աստվածաշնչյան պատվիրանները, որոնք գրականության սնուցող կենարար աղբյուրներից են։

Աստվածաշունչը շարունակում է պահպանել հասարակական մտածողության ձևավորման վրա ունեցած իր անգնահատելի ազդեցությունը՝ սերմանել սիրո ու բարու - թյան հունդեր։ Այդ պատճառով աստվածաշնչյան առակները միշտ արդիական են, սիրելի և ընկալելի։ Անտարակույս է, որ աստվածաշնչյան աշխարհայեցողու - թյունն առանձնակի կարևորություն ունի մատաղ սերնդի հայրենասիրա - կան, մարդասիրական, գեղագիտական, բարոյահոգեբանական դաստիարակության կազմակերպման գործընթացներում։

Յուրաքանչյուր ժամանակաշրջան առաջադրում է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության կազմակերպման իր խնդիրներն ու նպատակները, եղանակներն ու մեթոդները, ճշգրտում արժեհամակարգային չափանիշները։

Սակայն կան չափանիշներ, որոնք միշտ կենսունակ են ու առաջնային ցանկացած ժամանակաշրջանի համար։

Հատկապես մատաղ սերնդի դաստիարակության կազմակերպման գործընթացներում դրանք մշտական են և հույժ կարևոր մեր օրերում։ Միանգամայն ընդունելի է այն

[1] Տե՛ս, Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան 1951, էջ 59-60։

կարծիքը, որ աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը եղել և մնում են ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը, ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ: Ահա թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը[2]:

[2] Տե՛ս, Գյուլամիրյան Ջ.Հ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր., Զանգակ-97 2018, էջ 34-35:

2. Աստվածաշնչյան առակները և կիրառման հաճախականությունը մայրենիի դասագրքերում

21-րդ դարում անհատի հոգևոր զարգացումը դարձել է հրատապ խնդիր ազգային մշակույթի, ինքնության, արժեքային համակարգի ձևավորման համատեքստում: Աստվածաշնչյան առակը բանահյուսության հնագույն տեսակներից է և առկա է գրեթե բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ: Այն զարգացել է հորինված հեքիաթների հիման վրա. այս առումով կարող ենք ասել, որ առակի ժանրն ու հեքիաթի ժանրը ունեն որոշ ընդհանրություններ: Աստվածաշնչյան առակներում նկարագր - վում են մարդկային բնավորության խտացված գծերը, մարդկանց արարքները, նրանց փոխհարաբերությունները, ծաղրվում են մարդկանց թերություններն ու բացերը, սակայն այդ բոլորը ներկայացված են այլաբանորեն, փոխաբերական ձևով՝ կենդանիների ու իրերի փոխհարաբերության միջոցով, և հենց այս այլաբանություն է, որ բացահայ - տում է նրա առանձնահատկությունը: Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն: Այդպիսիք են՝ Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա: Ներկայացնենք աստվածաշնչյան առակներից մի քանիսը: Օրինակ՝

Այրի կնոջ և դատավորի առակը:

Այս առակը դպրոցականներին սովերեցնում է, որ անդադար ու անձանձրույթ պետք է աղոթել Աստծուն, ով անտարակույս կլսի իրեն դիմողի աղոթքներն ու աղաչանքները այլ ոչ թե անիրավ և անաստված դատավորին, ով լսեց այրի կնոջը միայն նրա համար, որ վերջինս արդեն ձանձրացնում էր իրեն: Այրին Քրիստոսին թողած՝ ապավինում էր անիրավ դատավորին՝ իրավունք էր խնդրում մեկ այլ դևից, որպեսզի ձերբազատվի մեկ այլ անիրավի բռնությունից:

Անիրավ տնտեսի առակը

Այս առակում տանուտերն Աստված է, տնտեսն էլ մարդն է: Աշխարհի բոլոր բարություններն Աստուծո ունեցվածքն են: Մարդը դրանց տերը չէ, այլ մատակարա - րող պաշտոնյան: Աստված աշխարհի բարությունները մարդուն է հանձնել, որ այս աշխարհում դրանք օգտագործելով՝ հանդերձյալ աշխարհի համար արդյունք և շահ պատրաստի: Աշխարհի բարիքները մարդու ձեռքում ժամանակավոր են: Մի օր դրանք այլևս ձեռքի տակ չպիտի ունենա: Աստված դրանք հանձնել է, որպեսզի նա որևէ ձևով

օգտվի այդ բարիքներից, և երբ դրանք իր ձեռքից պակասեն, այսինքն՝ երբ մարդը մեռնի, իր ապագա կյանքում այս աշխարհի մատակարարությունից օգուտ քաղած լինի:

Ուշագրավ է նաև օգուտ քաղելու ձևը: Երբ տնտեսը մուրհակները փոխել էր տալիս, նա կարող էր օգտվել տարբերության գումարից՝ նույն պահին պարտապաններից պատշաճ մաս ստանալով, բայց տնտեսի նպատակն էր շահել միայն պարտապան - ների երախտապարտությունը, որպեսզի երբ պաշտոնից ազատվի, նրանց տներում բնակություն և կերակուր գտնի: Նա ցանկացավ ընկերներ ձեռք բերել՝ մարդկանց լավություն անելով, որ ընկերոջն արած լավությունից մի օր էլ ինքը օգտվեր:

Առակի նպատակն է հասկացնել և ուսուցանել, թե մարդ պարտավոր է ձեռքում եղած աշխարհի բարիքներից ընկերոջը օգուտ հանել, օգնել, նպաստել, ողորմել:

«Աշխարհի որդիները» նրանք են, ովքեր ճարպիկ են ու խորամանկ և բոլոր գործերում իրենց շահն են փնտրում: Իսկ «լույսի որդիները» նրանք են, ովքեր Աստծուն սիրելով և հանդերձյալ կյանքի ձգտելով՝ չեն հոգում երկրավորի մասին, այլ միայն հոգևոր հարստությունն են արժևորում: Սակայն առաջինները նույնպես կարող են փրկվել վերջինների նման, եթե իրենց անօրինությունը գիտակցեն ու զղջան, եթե իրենց հանցանքները ընդունեն ու խոստովանեն, եթե ապաշխարեն ու փորձեն իրենց մեղքերը քավել՝ ներելով և ողորմություն անելով, քանզի «աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն»:

Հավատի լույսը

Այս առակով Հիսուսը ուզում է մարդկանց սովորեցնել, որ կարևորը մարդու ներաշխարհն է, ոչ թե արտաքինը: Մարմնի ճրագն աչքն է. երբ քո աչքն առողջ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ երբ քո աչքը հիվանդ է, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Շատ անգամ մարդիկ տարված են արտաքին երևացող բաներ մաքրելով, մինչդեռ մեր ներսը լի է հափշտակությամբ և չարությամբ: Բայց երբ մարդը լսում է և հավատում Աստծո խոսքին, նրա մարմինը նմանվում է ճրագի, որն իրենից լույս է ճառագում, հետևաբար կարևորը մարդու հավատն է ու ներքին լույսը, այլ ոչ թե արտաքինը, որն շատ անգամ խափուսիկ է:

Առակներն այժմ էլ պատմվում և պահպանվում են ժողովրդի մեջ: Այս առում - ով պետք է նշել, որ ուսուցումը լինելով բարդ գործընթաց, պահանջում է աշխատանք և ճիշտ մոտեցում գործընթացի իրականացման համար:

Ուսուցման գործընթացն իմացական գործունեության յուրահատուկ ձև է, քանի

որ աշակերտը ուսուցման միջոցով յուրացնում է հասարակական փորձը, ճանաչում է աշխարհը: Ուսուցման տարբերությունը գիտական իմացությունից նրանում է, որ նյութը, որն արդեն յուրացված է գիտության կողմից՝ հատուկ կազմակերպված է և ներկայացված է ուսուցման համար: Մի շարք առակներում երևում է հասարակական շերտավորումը և սոցիալական պայքարի առկայությունը:

Մարդիկ դատում ու դատապարտում են իշխաններին, տրտնջում թագավորներից, նույնիսկ՝ Աստծուց: Սակայն հեղինակի կարծիքով, ժողովուրդը պետք է հնազանդվի իշխողներին, իսկ վերջիններս պարտավոր են նրան պահպանել օտար կեղեքիչներից ու վտանգից: Սովորողի համակողմանի զարգացման հիմքը արժեքային համակարգի ձևավորումն է՝ ազգային և համամարդկային արժեքների գիտակցումը:

Մանկավարժական արժեբանության կիրառական տեսանկյունից այս դրույթը արտացոլվում է հանրակրթության կրթական չափորոշիչներում, ուսումնական ծրագրերում, ուսումնական պլաններում, դասագրքերում, դիդակտիկ և մեթոդական նյութերում[3]:

Դպրոցը, հանդիսանալով անձի կրթության, դաստիարակության դարբնոցը, սերնդից սերունդ փոխանցում է հասարակության մեջ կուտակված նյութական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական, բարոյական, գեղագիտական ճանաչողական և այլ բնույթի արժեքներ:

Սովորողի հոգեմտավոր ներաշխարհը ձևավորվում է ազգային և համամարդկային արժեքների գիտակցության ներքո, իսկ այդ արժեքներն ընկած են մարդասիրական կրթության հիմքում: Սովորողի ճանաչողական արժեքները ձևավորվում են գիտելիքի միջոցով. մտորել-գնահատել-իմաստավորել-յուրացնել ճանաչողական արժևորման տրամաբանական քայլերը սկսվում են գիտելիքի փոխանցմամբ: Հետևաբար, գիտելիքը համարվում է առաջնային արժեք կրթական արժևորման աստիճանակարգում:

Անձի կրթվածություն ասելով՝ հասկանում ենք ոչ միայն գիտելիքների համակարգի տիրապետում, այլև՝

- ստեղծագործական ունակությունների դրսևորում,
- համագործակցային, ինքնաարտահայտման որակների առկայություն,
- արժեքային գիտակցություն:

---

[3] Տե՛ս, Սիմոնյան Վ., Գրական տարրական գիտելիքները որպես կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորման հիմք, Եր., 2016, էջ 18-20:

Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները մեծ հետաքրքրությամբ են կարդում աստվածաշնչյան առակներ. առակներում հանդես եկող տարբեր երևույթների միջոցով ակնարկվում են մարդիկ՝ իրենց դրական ու բացասական գծերով: Առակների միջոցով սովորողը նոր որակներ է ձեռք բերում. նա արդարացիորեն դիտարկում և վերլուծում է մարդկային տարբեր բնավորություններ, քննադատում բացասականը՝ չարությունը, ծուլությունը, ագահությունը, ժլատությունը և այլն:

Ի լրումն այս ամենի հոգևոր, բարոյական որակների ձեռքբերման առումով էլ ավելի ուժ ունեն Հիսուսի առակները, որոնք իրական կյանքից վերցված պատմություններ են: Դրանք Հիսուսի կողմից ավանդված բարոյականության յուրահատուկ դասեր են:

Բարոյական, հոգևոր արժեքների փոխանցման յուրահատուկ աղբյուր է <<Մանկական աստվածաշունչը>>. Հիսուս առակներով խոսում է երեխայի հոգու հետ՝ բարերարության, լույսի, մարդասիրության դասեր տալով:

Կրկնության դասը հնարավորություն է տալիս ուսուցչին՝ անդրադառնալու Հիսուսի առակներին և դրանց միջոցով սովորողների մոտ ձևավորելու նոր արժեքներ:

Առակների ուսուցման ժամանակ հարկավոր է ուսուցչի կողմից հստակ մեկնաբան - վի յուրաքանչյուր միտքը իր արտահայտած իմաստով, քանզի այն կարող է երբեմն ստանալ ոչ ճիշտ ընկալում, քանզի առակն ինքնին խոհախրատական և փիլիսոփայական միտք է իրենից ենթադրում:

Ցանկացած առարկայի դպրոցական դասագիրք պետք է կառուցվի դասա - գրքերին ներկայացվող պահանջներին համապատասխան, քանի որ դա լուրջ աշխատանք է. այն պետք է համապատասխանի չափորոշչային պահանջներին, աշակերտների տարիքային առանձնահատկություններին[4]:

Մայրենիի դասագրքերում ներառված առակների հաճախականությունը պարզելու համար ուսումնասիրել ենք 1-4-րդ դասարանների մայրենիի գործող դասագրքերը (Վ. Սարգսյան և ուրիշներ, Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան և Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան հեղինակային խմբեր)՝ դուրս գրելով դրանցում ներառված առակների անունները, այնուհետև արդյունքները ներկայացրել ենք աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 1.

[4] Տե՛ս, Գյուլամիրյան Զ.Հ., Հայոց լեզվի ուսուցման ծրագիր նախակրթարանի Ա և Դ դասարանների համար, Հայ կաթողիկե Պատրիարքարանի տպարան 2018, էջ 12-13:

Դասագրքի հեղինակներ	Դասարան	Առակի հեղինակ	Առակի վերնագիր
Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան	1-ին	Ղ. Աղայան	«Մեղուն ու հավը»:
		Աթ. Խնկոյան	«Ճպուռն ու մրջյունը», «Աղվեսն ու կռունկը»:

Վ. Սարգսյան և ուրիշներ	1-ին	Վ. Այգեկցի	«Ագռավն ու աղվեսը», «Իմաստուն մարդը», «Աղվեսն ու գայլը»:
Վ. Սարգսյան և ուրիշներ	2-րդ	Ղ.Աղայան	«Մեղուն ու հավը»:
Վ. Սարգսյա և ուրիշներ	3-րդ	Եզոպոս	«Հնարամիտը»:
		Հովսեփ Ասորի	«Երկու աքլոր»:
		Մխիթար Գոշ	«Ճայը և սագը»:
		Վ. Այգեկցի	«Մարդը, ընկույզը և ձմերուկը»:
		Աթ. Խնկոյան	«Խոզն ու ագռավը»:
		Հրաչիկ Սևոյան	«Անտառն ու քամին»:
Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան	3-րդ	Հենրիկ Սևան	«Աղվեսն ու վագրը»:
		Լեոնարդո դաՎինչի	«Մայրին»:
		Իվան Կռիլով	«Կարապը, խեցգետինը և գայլաձուկը»:

		Եզոպոս	«Ճամփորդները»:
		Վարդան Այգեկցի	«Առյուծն ու մուկը»:
Վ. Սարգսյան, և ուրիշներ	4-րդ	Ավ. Իսահակյան	«Արջն ու օձը»:
		ԱթաբեկԽնկոյան	«Ճպուռն ու մրջյունը»:
		Եզոպոս	«Առյուծն ու մուկը», «Առյուծն ու նապաստակը»:
		ՎարդանԱյգեկցի	«Այրի կինը և որդին»:
Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան	4-րդ	Ըստ Աստվածաշնչի	«Լավ ընկերը»:
		ՎարդանԱյգեկցի	«Առյուծը, գայլը և աղվեսը»:

Նայելով աղյուսակին՝ ակնհայտ երևում է, թե տվյալ դասարանում որ հեղինակային խմբի դասագրքում ինչ առակներ են ներառված:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզեցինք, որ Ա. Քյուրքչյան, Լ. Տեր - Գրիգորյան հեղինակային խմբի 2-րդ դասարանի մայրենիի դասագրքում առակներ ներառված չեն:

Առակները սիրելի և զվարճալի են երեխաների համար, սակայն դրանց շուրջ տարվող աշխատանքը ոչ միշտ է համակարգված և նպատակաուղղված իրականացվում՝ շեշտադրելով հատկապես սովորողների վերլուծական մտածողության զարգացումը:

Հետևաբար, ոչ միայն կարևոր է դասագրքերում և առհասարակ տարրական դպրոցում առակների ճիշտ և հանգամանորեն ընտրությունը, այլև բազմաշերտ վերլուծությունը:

Եզրակացություն

Գիտամեթոդական գրականության ուսումնասիրումը, փորձնական դասերի վարումը, դասալսումների իրականացումը, ուսուցիչների շրջանում իրականացրած հարցախույզի արդյունքների վերլուծությունը հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

- Առակի՝ որպես փոքրածավալ գրական ստեղծագործության գաղափարի բացահայտում, հիմք է հանդիսանում ավելի ծավալուն ստեղծագործությունների գաղափարի բացահայտման համար:
- Կարևորելով առակի դերը գաղափարի բացահայտման գործում՝ գտնում ենք, որ մայրենիի դասագրքերում ներառված առակները քիչ են. մինչդեռ դրանք պետք է շատ լինեն, քանի որ առակն առավել դաստիարակչական նպատակ ունեցող ստեղծագործություն է և օգնում է մարդուն իրական կյանքում ճիշտ կողմնորոշվելու և ավելի ճիշտ ապրելու:
- Առակի շուրջ իրականացվող բազմաբնույթ աշխատանքները, գաղափարի բացահայտման համար մեր կողմից մշակված և կիրառված առաջադրանք - ների համակարգը նպաստում են սովորողների՝

✓ վերլուծական-համադրական,

✓ քննադատական մտածողության,

✓ համեմատություններ, ընդհանրացումներ, եզրահանգումներ կատարելու,

✓ ստեղծագործական կարողությունների ձևավորմանն ու աշակերտների տրամաբանության զարգացմանը,

✓ առակի գաղափարի բացահայտմանն ու ենթատեքստի կռահմանը:

- Մեր կողմից կիրառված ուսուցման կազմակերպման ձևերը, փոխներգոր - ծուն մեթոդներն ու մեթոդական հնարները նպաստեցին առակի գաղա - փարի վերհանման, առակի դերի ու նշանակության արժևորման, արդյունավետ ուսուցման ու աշակերտների տրամաբանության զարգացմանը:
- Ուսումնասիրվող առակների գաղափարի բացահայտման աշխատանքները պետք է ունենան շարունակական բնույթ:

Մեր կողմից կատարված առաջարկություններն են՝

- Մասնագիտական գրականության մեջ կարելի է մշակել և առաջարկել

աստվածաշնչյան առակների ուսուցման արդյունավետությունը բարձրացնող նյութեր։

- Սակավ են հատկապես տարրական դպրոցում աստվածաշնչյան առակների ուսումնասիրման ուղղությամբ մեթոդական գրականությունը, հոդվածները և համացանցային նյութերը։

Օգտագործված գրականության ցանկ

1. Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան 1951, 595 էջ։
2. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, Եր., Էդիթ Պրինտ 2020, 168 էջ։
3. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4, Եր., Էդիթ Պրինտ 2020, 200 էջ։
4. Գյուլամիրյան Ջ.Հ., Հայոց լեզվի ուսուցման ծրագիր նախակրթարանի Ա և Դ դասարանների համար, Հայ կաթողիկե Պատրիարքարանի տպարան 2018, 127էջ։
5. Գյուլամիրյան Ջ.Հ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր., Զանգակ-97 2018, 341էջ։
6. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Բալայան Ա., Ինչպես պլանավորել մայրենիի դասը 3, Մեթոդական ձեռնարկ, Եր., 2018, 512 էջ։
7. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ (1-9-րդ դասարաններ) 2011, 49 էջ։
8. Պետրոսյան Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Եր., «ԱՆ-ՋՈՆ», Լույս 2008, 275 էջ։
9. Սիմոնյան Վ., Գրական տարրական գիտելիքները որպես կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորման հիմք, Եր., 2016, 181 էջ։
10. Սարգսյան Վ.Ա., Մայրենի 1, Եր., Մանմար 2020, 64 էջ։
11. Սարգսյան Վ.Ա. և ուրիշներ, Մայրենի 2, 2020, 168 էջ։
12. Սարգսյան Վ.Ա. և ուրիշներ, Մայրենի 3, 2020, 168 էջ։
13. Սարգսյան Վ.Ա. և ուրիշներ, Մայրենի 4, 2020, 178 էջ։
14. Տեր-Գրիգորյան Ա.Ե., Ընթերցանության մեթոդիկա, Եր., Լույս 1978, 246 էջ։
15. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 1, Եր., Էդիթ Պրինտ 2020, 64 էջ։
16. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 2, Եր., Էդիթ Պրինտ 2020, 176 էջ։